# ՈՒԿՐԱԻՆԱՅՈՒՄ
# ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՆՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

IOM • OIM

**IOM International Orgnization for Migration**
**Միգրացիայի միջազգային կազմակերպություն(ՄՄԿ)**
**Հայաստանյան առաքելություն**

# ՈՒԿՐԱԻՆԱՅՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՆՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

**Սույն գրքույկի նպատակն է տեղեկություններ հաղորդել Ուկրաինայի միգրացիոն և աշխատանքային օրենսդրության, ինչպես նաև Ուկրաինայում գտնվելու ընթացքում օտարերկրացիների և միգրանտների ունեցած իրավունքների մասին:**

IOM • OIM

IOM International Orgnization for Migration
**Միգրացիայի միջազգային կազմակերպություն(ՄՄԿ)**
**Հայաստանյան առաքելություն**

**ՄՄԿ** **ՄԱԶԾ**

Սույն ուղեցույցը հրատարակվել է Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) Թրաֆիքինգի դեմ պայքարի ծրագրի ֆինանսավորմամբ:

Կազմեցին՝ **Քրիստինա Գալստյանը և Նունե Ասատրյանը**

Տպագրության պատրաստեց՝ **ՄՄԿ Հայաստանյան առաքելության ծրագրերի մշակման և իրականացման բաժինը:**

**© Հեղինակային իրավունքը պաշտպանված է**: Սույն հրատարակության ոչ մի մաս չի կարող վերարտադրվել, պահպանվել որոնողական համակարգում կամ փոխանցվել էլեկտրոնային, մեխանիկական, պատճենահանման, ձայնագրման կամ այլ եղանակով առանց հեղինակների և հրատարակչի նախնական գրավոր թույլատվության:

*****

Սույն հրատարակությունում արտահայտված կարծիքները կարող են չհամընկնել ՄՄԿ-ի կամ նրա անդամ-պետությունների պաշտոնական տեսակետների հետ:

*****

**Հրատարակիչ**՝ Միգրացիայի Միջազգային կազմակերպություն

**IOM International Organization for Migration**
**OIM Organization Internationale pour les Migrations**
**OIM Organización Internacional para las Migraciones**

**Միգրացիայի միջազգային կազմակերպություն(ՄՄԿ)**
**Հայաստանյան առաքելություն**

Հայաստան • Երևան 0010 • ՄԱԿ-ի գրասենյակ • Պետրոս Ադամյան փողոց 14, 1-ին հարկ

Հեռ.՝ (+374 10) 58 56 92 • 58 37 86 • Հեռապատճեն՝ (+374 10) 54 33 65

• Էլ.փոստ՝ iom@iom.am • http://www.iom.int/armenia

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ 5

ՈՒԿՐԱԻՆԱՅՈՒՄ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ՄՈՒՏՔԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ 6

ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ՄՈՒՏՔԸ ԵՎ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՒԿՐԱԻՆԱՅՈՒՄ. ՆՈՐ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐՈՒՄ 7

ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ 8

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ 9

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ՝ ՀԱՄԱՁԱՅՆ ՈՒԿՐԱԻՆԱՅՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ (ՄՃՓ/TIR) ՀԱՄԱԿԱՐԳԻ 10

Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻ՝ ՄԻՆՉԵՎ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՄԱՔՍԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՆ ԱՆՑՆԵԼԸ 11

ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՄԱՔՍԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՆ ԱՆՑՆԵԼԻՍ՝ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆ ՊԵՏՔ Է ԼՐԱՑՆԻ ՆԵՐԳԱՂԹԻ ՔԱՐՏԸ 12

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ՈՒԿՐԱԻՆԱ ՄՈՒՏՔԻ ԵՎ ՈՒԿՐԱԻՆԱՅԻՑ ԵԼՔԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 12

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԵԼՔԸ ՈՒԿՐԱԻՆԱՅԻՑ 14

ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՏԱՐԱԾՔ ՄՈՒՏՔ ԳՈՐԾՈՂ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ 15

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 18

## ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՆՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Բնակչությունը՝ 46,918,000
ՀՆԱ-ն բնակչության մեկ շնչի համար (ըստ Գնողունակության համարժեքության)՝ 6,394 ԱՄՆ դոլար
Դրամական փոխանցումները՝ 595 մլն. ԱՄՆ դոլար (տարեկան՝ մոտ 2-ից 4 միլիարդ ԱՄՆ դոլար)
Զուտ միգրացիայի գործակիցը՝ -2.9 միգրանտ/1,000 բնակչություն
Ներգաղթողները՝ 14.7%
Կանանց թիվը ներգաղթողների շրջանում՝ 57.8%
Օտարերկրացիների թիվը Ուկրաինայում՝ 213,749
15 տարեկանից ցածր բնակչության տոկոսը՝ 14.7%
ՄԻԱՎ- ի տարածվածությունը՝ 1.4%

ՄՄԿ-ի Անդամ է հանդիսանում 2001 թվականի նոյեմբերից

## ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ

Ուկրաինիայի քաղաքացիությունը Ուկրաինայի տարածքում, ինչպես նաև դրա սահմաններից դուրս իր քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանության հինական նախադրյալ է պետության համար:

Ուկրաինայի Սահմանադրության համաձայն՝ երկրում գործում է միաքաղաքացիություն: Ուկրաինան չի սատարում բազմաքաղաքացիության գաղափարը քաղաքացիական բնակչության շրջանում, քանզի անձը չի կարող հավասարապես և արդյունավետ կերպով պատասխանատվություն կրել և օգտվել իր՝ մի քանի պետություններում ունեցած իրավունքներից: Եթե Ուկրաինայի քաղաքացին ձեռք է բերում այլ երկրի կամ երկրների քաղաքացիություն (հպատակություն), ապա Ուկրաինայի հետ նրա իրավական հարաբերություններում նրան վերաբերվում են որպես միայն Ուկրանայի քաղաքացի: Սա վերաբերվում է նաև Ուկրաինայի քաղաքացիություն ձեռք բերած օտարերկրացուն, ում՝ այս երկրի հետ իրավական հարաբերություններում վերաբերվում են միայն որպես Ուկրաինայի հպատակ: Ինչ վերաբերվում է բազմաքաղաքացիության խնդրին, ապա Ուկրաինայի դիրքորոշումը լիովին համապատասխանում է միջազգային նորմերին:

«Ուկրաինիայի քաղաքացիության մասին» Օրենքում նշվում է, որ, անկախ ձեռք բերման հիմքերից, Ուկրաինայի քաղաքացիությունը մեկն է և հավասար բոլորի համար: Անկախ այն փաստից, թե քաղաքացիությունը ձեռք է բերվել ծննդյան փաստի ուժով, թե այլ հիմքերով, բոլոր քաղաքացիներն ունեն հավասար իրավունքներ և կրում են միևնույն պատասխանատվությունը:

Օրենքով սահմանվում են նաև հպատակագրման (օտարերկրացուն քաղաքացիության շնորհման) հիմքերը, մասնավորապես՝ ծագումը, ազատ ընտրությունը, քաղաքացիության վերականգնումը և այլն: Միևնույն ժամանակ, Ուկրաինայի օրենքի համաձայն մերժվում է քաղաքացիության շնորհումը մարդկանց որոշակի խմբին, հատկապես այն անձանց, որոնք հանցանք են գործել մարդկության հանդեպ, իրականացրել են ցեղասպանություն, ընդդեմ Ուկրաինայի ազգային անկախության կատարել են բռնի գործողություններ և այլն:
Նույն օրենքով սահմանվում են Ուկրաինայի քաղաքացիությունից հրաժարվելու հիմքերը և դրա իրականացման կարգը:

Ուկրաինայի քաղաքացիությունը կարող է դադարեցվել միայն այն պայմանով, որ անձը ձեռք բերի մեկ այլ երկրի քաղաքացիություն կամ ներկայացնի մեկ ուրիշ պետության իշխանությունների կողմից տրված փաստաթուղթ, համաձայն որի՝ տվյալ անձը կարող է ստանալ այդ երկրի քաղաքացիությունը Ուկրաինայի քաղաքացիության դադարեցումից հետո: Այս պայմանի հիմնական նպատակը Ուկրաինայի հպատակության դադարեցման արդյունքում քաղաքացիություն չունեցող անձանց ի հայտ գալու դեպքերի կանխումն է: Չի թույլատրվում դադարեցնել Ուկրաինայի քաղաքացիությունը, եթե դրան ձգտող անձը պատասխանատվության է ենթարկվել՝ մեղադրված լինելով քրեական հանցագործություն կատարելու մեջ, կամ՝ ում նկատմամբ Ուկրաինայում կա ուժի մեջ մտած և դատական կատարման ենթակա մեղադրական դատավճիռ:

Ուկրաինայի քաղաքացիները չեն կարող զրկվել քաղաքացիությունից կամ այն փոխելու իրավունքից, ինչպես նաև ցանկացած ժամանակ Ուկրաինա վերադառնալու իրենց իրավունքից: Ուկրաինայի հպատակները նաև չեն կարող արտաքսվել կամ հանձնվել այլ պետությունների:
Երկրի սահմաններից դուրս Ուկրաինայի քաղաքացիների բնակությունը կամ ժամանակավոր կացությունը չի կարող զրկել նրանց Ուկրաինայի քաղաքացիությունից:

Այն օտարերկրացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, որոնք Ուկրաինայում են գտնվում օրինական հիմունքներով, Ուկրաինայի քաղաքացիների հետ միասին օգտվում են նույն իրավունքներից և ազատություններից և կրում են նույն պատասխանատվությունը: Այդ իրավական նորմը ամրագրված է Ուկրաինայի «Օտարերկրացիների կարգավիճակի մասին» օրենքում:

Իրենց քաղաքացիության կամ մշտական բնակության երկիրը լքած անձանց հանդեպ Ուկրաինան կատարում է մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող իր միջազգային պարտավորությունները: Մասնավորապես, կարող է ապաստան տալ օտարերկրացիներին կամ/և քաղաքացիություն չունեցող անձանց՝ համաձայն «Փախստականների մասին օրենքի»:
Ուկրաինայի քաղաքացիություն շնորհելու և այն դադարեցնելու, ինչպես նաև օտարերկրացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց ապաստան տալու մասին որոշումները կայացնում է Ուկրաինայի նախագահը:

## ՈՒԿՐԱԻՆԱՅՈՒՄ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ՄՈՒՏՔԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ

Ուկրաինա մուտք գործելու համար բոլոր երկրների քաղաքացիները կամ պետք է ունենան Ուկրաինայի հետ առանց մուտքի արտոնագրի՝ վիզայի այցելության ռեժիմի մասին համաձայնագիր, կամ պետք է ունենան վիզա՝ բացառությամբ այն անձանց, ովքեր Ուկրաինայի հետ առանց վիզայի այցելության ռեժիմի մասին համաձայնագիր ունեցող երկրների քաղաքացիներ են, կամ ովքեր կարող են առանց վիզայի Ուկրաինա ուղևորվել որպես զբոսաշրջիկներ: ԵՄ

երկրների, ԱՄՆ-ի, Կանադայի, Շվեյցարիայի, Լիխտենշտեյնի, Ճապոնիայի, Անդորրայի, Վատիկանի, Իսլանդիայի, Մոնակոյի, Նորվեգիայի, Սան Մարինոյի քաղաքացիներից վիզա չի պահանջվում Ուկրաինայում մնալու համար և նրանք ունեն մինչև 90 օր այնտեղ մնալու իրավունք: Ազգային անձնագրերի առկայության

դեպքում՝ օտարերկրացիները, պետք է մուտք գործեն երկիր/դուրս գան երկրից պետական սահմանի անցման կետերով:

Ուկրաինայում ժամանակավոր բնակության դեպքում, օտարերկրացին իրավունք չունի իր կացության կարգավիճակը փոխելու մեկ ուրիշով և դիմելու Ուկրաինայում մշտական բնակության թույլտվություն ստանալու համար:

2001 թվականի հուլիսի 1-ից, համաձայն Ուկրաինայի նախագահի կողմից «Մարդու տեղաշարժի ազատության և բնակության վայրի ազատ ընտրության իրավունքի իրականացմանն ուղղված լրացուցիչ միջոցառումների մասին» 2001 թվականի հունիսի 15-ի N 435 որոշման, սահմանված կարգով Ուկրաինա մուտք գործող օտարերկրացիների և նրանց անձնագրային փաստաթղթերի գրանցումը կատարվում է միայն պետական սահմանի անցման կետերում Ուկրաինայի Պետական սահմանի պաշտպանության պետական կոմիտեի մարմինների կողմից: Ուկրաինայում սահմանված կարգով ժամանակավորապես բնակվող օտարերկրացիների և նրանց անձնագրային փաստաթղթերի հետագա գրանցումը չի իրականացվում ներքին գործերի գործակալությունների կողմից:

Այն անձնագրերը, որոնք պետք է գրանցվեն Ուկրաինայի վիզաների և գրանցման գրասենյակներում.

- Օտարերկրացիներ, որոնք Ուկրաինա են ժամանել 3 ամսից ավելի ժամանակահատվածով,
- Օտարերկրացիներ, որոնք Ուկրաինա են ժամանել պայմանագրային աշխատանքի կամ կրթության համար:
- Ուկրաինայում գրանցվելու համար հարկավոր է վիզաների և գրանցման գրասենյակ ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝ անձնագիր (բնօրինակը և պատճենը), ստանդարտ դիմումաձևեր, 2 լուսանկար, բժշկական ապահովագրություն, բնակարանի վարձակալության պայմանագիր և այլն: Փաստաթղթերի ցանկը կարող է տարբեր լինել տարբեր դեպքերի համար: Օտարերկրացին պետք է այցելի վիզաների և գրանցման գրասենյակ և ճշտի ներկայացվելիք անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:

## ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ՄՈՒՏՔԸ ԵՎ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՒԿՐԱԻՆԱՅՈՒՄ. ՆՈՐ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐՈՒՄ

2007 թվականի հուլիսի 11-ին Ուկրաինայի Նախարարների կաբինետը հրապարակեց N 917 որոշումը «Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց Ուկրաինա մուտք գործելու և այնտեղ բնակվելու, Ուկրաինայից ելքի և Ուկրաինայի տարածքով տարանցիկ ուղևորություններ կատարելու վերաբերյալ կանոնակարգերում փոփոխություններ կատարելու մասին»:

### Որոշման համաձայն՝ մտցվում են հետևյալ փոփոխությունները.

«Ուկրաինա մուտք գործելու, Ուկրաինայի տարածքով տարանցիկ ուղևորություններ կատարելու դեպքում, օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, որոնք մշտապես բնակվում են այն երկրներում, որոնց ցանկը հաստատված է Ուկրաինայի Նախարարների կաբինետի կողմից, կարող են անց-

նել պետական սահմանը՝ Ուկրաինայում բնակվելու, Ուկրաինայի տարածքով տարանցիկ ուղևորություններ կատարելու և Ուկրաինայից մեկնելու վերաբերյալ իրենց ֆինանսական ապահովվածության վերաբերյալ հաստատում ներկայացնելուց հետո միայն:

ֆինանսական ապահովվածության առկայության ստուգումն իրականացվում է սահմանի ստուգման անցակետերում:

Օտարերկրացիները՝ ցանկում ընդգրկված պետության քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, որոնք մշտապես բնակվում են այնտեղ, Ուկրաինա մուտք գործելիս կամ Ուկրաինայի տարածքով տարանցիկ ուղևորություններ կատարելիս պետք է ունենան դրամական միջոցներ, որոնք կազմում են նրանց կողմից Ուկրաինայի տարածք մուտք գործելու օրը կացության յուրաքանչյուր ամսվա կամ մեկ ամսից ավելի կարճ ժամանակահատվածի համար Ուկրաինայում սահմանված կենսապահովման նվազագույնի 20-ապատիկը: Նշված միջոցների առկայությունը կամ դրանց առկայության երաշխիքները հավաստելու համար հարկավոր է ստուգման ներկայացնել հետևյալը.

- դրամական միջոցներ ուկրաինական կամ որևէ այլ ազատ փոխարկելի օտարերկրյա արժույթով,
- գումարի մասին վկայող փաստաթուղթ, որի հիման վրա Ուկրաինայի բանկերից հնարավոր է ստանալ կանխիկ գումարը,
- միջազգային վճարային համակարգերի վճարային քարտ՝ դիմողի անձնական բանկային հաշվից քաղվածքով, ինչը հաստատում է գումարի առկայությունը հաշվին,
- Ուկրաինայում հյուրանոցային համարի նախնական պատվիրման կամ վճարման, սննդի վճարման մասին հավաստող փաստաթուղթ,
- զբոսաշրջային ծառայությունների վերաբերյալ պայմանագիր (վաուչեր),
- նամակ - երաշխավորագիր մասնավոր ձեռներեցի կամ իրավաբանական անձի կողմից, համաձայն որի վերջինս հրավիրում է օտարերկրացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին՝ պատասխանատվություն ստանձնելով վճարել անձի՝ Ուկրաինայում բնակվելու և Ուկրաինայից մեկնելու հետ կապված բոլոր ծախսերի համար,
- հետադարձ ուղևորության տոմս՝ դեպի տվյալ անձի քաղաքացիության կամ մշտական բնակության վայր հանդիսացող երկիր կամ որևէ երրորդ երկիր:

Այն օտարերկրացիները, որոնք հանդիսանում են վերոնշյալ պետությունների քաղաքացիներ, կարող են, ինչպես նախկինում, մուտք գործել Ուկրաինա առանց վիզայի՝ ներկայացնելով իրենց վավեր անձնագիրը և կարճ ժամանակահատվածով բնակվել Ուկրաինայում՝ առանց բնակության թույլտվություն ստանալու: Ուկրաինայում մնալու ընդհանուր տևողությունը չպետք է գերազանցի 90 օրացուցային օրը՝ ժամանման օրվանից սկսած յուրաքանչյուր 180 օր ժամանակահատվածի համար: Մուտքերի քանակը շարունակելու է լինել անսահմանափակ: Սակայն, օտարերկրացիները 180 օր ժամանակահատվածի ընթացքում, առանց վիզայի չեն կարող մնալ ընդհանուր առմամբ ավելի, քան 90 օրացուցային օր:

## ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Ուկրաինայի գործատուները պետք է աշխատանքի թույլտվություն ձեռք բերեն

Ուկրաինայում աշխատելու համար վարձված օտարերկրացիների համար: Աշխատանքի թույլտվությունը տրամադրվում է Ուկրաինայի Աշխատանքի և սոցիալական քաղաքականության նախարարության Զբաղվածության պետական կենտրոնի կամ դրա շրջանային կամ քաղաքային մարմինների («Զբաղվածության կենտրոնի») կողմից:

Օտարերկրյա քաղաքացիություն ունեցող աշխատող վարձելու համար գործատուն պետք է ապացուցի, որ աշխատանքը չի կարող կատարվել տեղացի աշխատողի կողմից: Ընդհանրական բնույթի աշխատանքի թույլտվություն չի տրամադրվում, փոխարենը՝ օտարերկրացին պետք է ձեռք բերի կոնկրետ ընկերության, հիմնարկի կամ կազմակերպության կոնկրետ պաշտոնում աշխատելու թույլտվություն:

Աշխատանքի թույլտվությունը կարող է տրամադրվել մինչև մեկ տարի ժամկետով, ինչը հետագայում կարող է երկարաձգվել: Իշխանությունները պետք է դիմումը քննարկեն 30 օրվա ընթացքում, իսկ օտարերկրյա քաղաքացին չի կարող աշխատանքի անցնել մինչև աշխատանքի թույլտվության տրամադրումը: Ուկրաինայի օրենսդրության համաձայն՝ որպես անհատ ձեռներեցներ գրանցված օտարերկրյա քաղաքացիների համար աշխատանքի թույլտվության առկայությունը պարտադիր չէ: Նշված պահանջներին չհետևելը կարող է հանգեցնել տուգանքների կիրառման և գործատուի հաշվին օտարերկրյա քաղաքացիների Ուկրաինայից հնարավոր արտաքսման:

## ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

### Գործատուի կողմից Զբաղվածության կենտրոն ներկայացվելիք փաստաթղթերի ցանկը.

- գործատուի պաշտոնական ձևաթղթի վրա ներկայացված դիմում,
- հիմնավորում այն մասին, թե ինչո՞վ է կարևոր աշխատողի աշխատանքը և թե ինչպե՞ս է կատարվելու այդ անձի բնակարանային ապահովումը և աշխատանքի ընդունումը (աշխատանքային պայմանների երաշխավորումը),
- օտարերկրացու և Ուկրաինայի հպատակի միջև երկու կողմերի միջև համաձայնեցված որոշակի ծավալի աշխատանքների կամ ծառայությունների կատարման նպատակով ձեռնարկատիրական գործունեության պայմանագրի նախագծի պատճենը,
- Ուկրաինայի իրավաբանական անձի Կանոնադրության պատճենը, ինչպես նաև դրա գրանցման վկայականի պատճենը (նոտարի կողմից վավերացված),
- օտարերկրյա քաղաքացիների ցանկը՝ ներառյալ նրանց անուն ազգանունը, ծննդյան տարեթիվը, անձնագրի համարը, մասնագիտությունը (աշխատանքը) և սեռը,
- լիազորագիր (կամ նմանատիպ այլ փաստաթուղթ), որը գործատուի ներկայացուցչին լիազորում է՝ զբաղվածության հարցերով զբաղվող պետական մարմիններում հանդես գալու գործատուի անունից,
- անձնագրի պատճենը՝ գրանցման վերաբերյալ բոլոր նշումներով և նույնականացման ծածկագրով,

- աշխատողի կրթության և որակավորումների մասին հավաստող փաստաթղթերի պատճենները (ուկրաիներեն թարգմանված և նոտարի կողմից վավերացված),
- հիմնադիր արձանագրության պատճենը,
- պետական հարկային մարմնի կողմից տրված հավաստագիր՝ գործատուի կողմից Ուկրաինայի օրենսդրությամբ նախատեսված հարկերի և գանցումների վճարման վերաբերյալ,
- աշխատանքի թույլտվություն ստանալու համար գերատեսչական տուրքի վճարման հաստատումը:

**Աշխատանքի թույլտվություն ստանալու դիմումը կարող է մերժվել հետևյալ վեց պատճառներից որևէ մեկի առկայության դեպքում.**

- դիմումի փաթեթը պարունակում է դրույթներ՝ համաձայն որոնց խախտվում են Ուկրաինայի օրենքները կամ միջազգային պայմանագրերը,
- օտարերկրացու համար պայմանագրով նախատեսվում են ավելի վատ աշխատանքային պայմաններ, քան նմանատիպ աշխատանք կատարող Ուկրաինայի քաղաքացիների համար ստեղծված աշխատանքային պայմաններն են (Ուկրաինայում օտարերկրացի աշխատողների բարօրության մասին հոգածության հազվագյուտ դրսևորում),
- օտարերկրացին կամ աշխատողը ներկայացրել է սուտ տեղեկություններ կամ կեղծ փաստաթղթեր,
- օտարերկրացին մտադիր է զբաղեցնել այնպիսի պաշտոն կամ իրականացնել այնպիսի գործողություն, որի համար, Ուկրաինայի օրենսդրության համաձայն, պահանջվում է ունենալ Ուկրաինայի քաղաքացիություն,
- առկա են ապացուցված փաստեր այն մասին, որ օտարերկրացին, Ուկրաինայի տարածքում իր բնակվելու ընթացքում, խախտել է Ուկրաինայի օրենքները կամ
- օտարերկրացուն Ուկրաինայի մուտքի վիզա տրամադրելու մերժումից դեռևս չի անցել մեկ տարի:

Ուկրաինայի օրենսդրությունը օտարերկրացի ներդրողներին թույլ է տալիս Ուկրաինայում գործունեություն ծավալել առանց իրավաբանական անձի կարգավիճակի՝ Համատեղ գործունեության համաձայնագիր կնքելով Ուկրաինայի որևէ իրավաբանական անձի հետ:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ՝ ՀԱՄԱՁԱՅՆ ՈՒԿՐԱԻՆԱՅՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ (ՄՃՓ/TIR) ՀԱՄԱԿԱՐԳԻ

Գործնականում, ՄՃՓ համակարգի համաձայն փոխադրումների հսկողության իրականացման և մաքսային իշխանությունների՝ Ուկրաինայում ՄՃՓ/TIR գրքույկների կիրառմամբ ապրանքների մաքսազերծման գործողությունների կանոնակարգման համար կիրառվող հիմնական փաստաթուղթը Ուկրաինայի Պետական մաքսային ծառայության (ՈւՊՄԾ) 2001 թվականի նոյեմբերի 25-ի N 755 հրամանն է՝ նրանում, ՈւՊՄԾ 2004 թվականի մարտի 5-ի N 172 Հրամանով կատարված փոփոխություններով:

Վերոնշյալ Հրամանով հաստատվում է հետևյալը.

**ՄճՓ/TIR գրքույկով միջազգային տրանսպորտային փոխադրումների մասին Մաքսային կոնվենցիայի դրույթների Կատարման կարգը, մասնավորապես՝**

- ՄճՓ/TIR գործողությունների կատարման պայմանները,
- ՄճՓ/TIR գրքույկի համաձայն ապրանքների ներմուծման, արտահանման և Ուկրաինայի տարածքով տարանցիկ փոխադրման կարգը և մանրամասները՝ ներառյալ չափազանց մեծ, ծանր և վտանգավոր ապրանքների փոխադրումը,
- ՄճՓ/TIR Կոնվենցիայի պայմանների համաձայն՝ տրանսպորտային մջջոցներին տրվող թույլտվությունը՝ մաքսային կնիքներով և դրոշմներով փոխադրումներ կատարելու համար,
- բեռնափոխադրողներին՝ բնակիչներին տրվող թույլտվությունը՝ ՄճՓ/TIR Կոնվենցիայի պայմանների համաձայն փոխադրումներ կատարելու համար,
- ՄճՓ/TIR գործողությունների կատարմամ ընթացքում խախտումների կատարման դեպքում մաքսային իշխանությունների կողմից իրականացվելիք գործողությունների կարգը (ՄճՓ/TIR ընթացակարգի խախտման վերաբերյալ ծանուցումների և մաքսային գանձումների և հարկերի վճարման մասին պահանջների ուղարկումը բեռնափոխադրողին և երաշխավոր միությանը),
- ՄճՓ/TIR-ի գրքույկի լրացման կանոնները,
- տրանսպորտային միջոցներին տրվող թույլտվության վկայականի ձևը՝ մաքսային կնիքներով և դրոշմներով, փոխադրումներ կատարելու համար:

Հաստատված լինելով Ուկրաինայի Պետական մաքսային ծառայության հրամանով՝ ՄճՓ/TIR Կոնվենցիայի դրույթների Կատարման կարգը (այսուհետ՝ Կարգը) նպատակաուղղված է՝ վերահսկելու ՄճՓ/TIR գրքույկով Ուկրաինայի ողջ տարածքով կատարվող փոխադրումները, կանոնակարգելու մաքսային իշխանությունների գործողությունները՝ ՄճՓ/TIR գրքույկով փոխադրված ապրանքների մաքսազերծմամբ և սահմանելու մաքսային իշխանությունների աշխատակիցների և բեռնափոխադրողների գործողությունները արտակարգ իրավիճակների կամ փոխադրման ժամանակ խախտումների կատարման դեպքում:

## Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻ՝ ՄԻՆՉԵՎ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՄԱՔՍԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՆ ԱՆՑՆԵԼԸ

Օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց Ուկրաինա մուտք գործելու կանոնները կարգավորվում են Ուկրաինայի Նախարարների կաբինետի 1995 թվականի դեկտեմբերի 29-ի N 1074 որոշմամբ: Այս փաստաթղթով սահմանվում են հիմնական հատկանիշներ և օտարերկրացիների՝ Ուկրաինա մուտք գործելու և Ուկրաինայի տարածքում բնակվելու կարգը:

Ուկրաինայում օտարերկրացիների իրավունքները և պարտականությունները սահմանվում են Ուկրաինայի «Օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին» 2003 թվականի նոյեմբերի 18-ի N 1277-IV օրենքով և Ուկրաինայի այլ իրավական ակտերով:

Բոլոր նրանց, ով պատրաստվում է անցնել Ուկրաինայի մաքսային սահմանը, խորհուրդ է տրվում կարդալ Ուկրաինայի Նախարարների կաբինետի 2001 թվականի դեկտեմբերի 13-ի N 1652 որոշումը, որը սահմանում է երկիր բերվող անձնական օգտագործման իրերի և սեփականություն հանդիսացող նման այլ առարկաների թույլատրելի ծավալները և երկիր մտցնելու կարգը:

Ուկրաինայի սահմանը անցնող անձի կողմից հայտարարագրվելիք տվյալների ցանկը և այդ տվյալները լրացնելու համար նախատեսված ձևաթուղթը սահմանվում են Ուկրաինայի Նախարարների կաբինետի 1997 թվականի հուլիսի 15-ի N 748 որոշմամբ:

## ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՄԱՔՍԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՆ ԱՆՑՆԵԼԻՍ՝ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆ ՊԵՏՔ Է ԼՐԱՑՆԻ ՆԵՐԳԱՂԹԻ ՔԱՐՏԸ

Այս քարտը, սահմանն անցնելիս, պետք է անձնագրի հետ միասին ներկայացնել Ուկրաինայի սահմանի վրա պետական ծառայություն իրականացնող մարմիններին և պահպանել Ուկրաինայում բնակվելու ողջ ժամանակահատվածում:

## ՆԵՐԳԱՂԹԻ ՔԱՐՏԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. Օտարերկրացու ներգաղթի քարտը պետք է լրացվի նրա իսկ կողմից, կամ, որպես բացառություն, նրան ուղեկցող անձի կողմից՝ անձնագրով գրանցված և պետական սահմանը փաստաթղթի տիրոջ հետ անցնող յուրաքանչյուր անձի համար առանձին.
ա) արտասահմանում գտնվող Ուկրաինայի հյուպատոսություններում,
բ) սահմանի անցման կետերում՝ Ուկրաինա մուտք գործելիս,
գ) միջազգային երթափոխի տրանսպորտային միջոցի մեջ:
2. Օտարերկրացուն Ներգաղթի քարտ տրամադրող իշխանությունների ներկայացուցիչները, անհրաժեշտության դեպքում, պետք է բացատրեն դրա լրացման կարգը:
3. Օտարերկրացու Ներգաղթի քարտը պետք է լրացված լինի լատիներեն կամ ուկրաիներեն տպատառերով՝ քարտի համապատասխան կետի յուրաքանչյուր տողում առանձին՝ միանման դրա երկու մասերում: Քարտը պետք է լրացված լինի սև կամ կապույտ թանաքով:
4. Այնպիսի կետերը, ինչպիսիք են՝ «Ծննդյան ամսաթիվը», «Անձնագրի սերիան», «Վիզայի համարը», «Երեխաների ծննդյան ամսաթվերը», «տրանսպորտային միջոցի (չվերթի) N- ը» պետք է լրացվեն արաբական թվերով:
5. «Ժամանում» մասի 1-11 և «Մեկնում» մասի 1-5 կետերը լրացնելուց հետո, օտարերկրացին դնում է իր ստորագրությունը համապատասխանաբար կետ 12- ի և կետ 6-ի դիմաց:
6. Արտասահմանում գտնվող Ուկրաինայի հյուպատոսական վարչությունում Ներգաղթի քարտը լրացնելիս, անհրաժեշտության դեպքում, օտարերկրացու նկարը փակցվում է «Մեկնում» մասի վերևի աջ անկյունում:

## ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ՈՒԿՐԱԻՆԱ ՄՈՒՏՔԻ ԵՎ ՈՒԿՐԱԻՆԱՅԻՑ ԵԼՔԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներկայումս, Ուկրաինայի օրենսդրությամբ նախատեսվում է օտարերկրացիների՝

(օտարերկրյա քաղաքացիների և տվյալ երկրի քաղաքացի չհանդիսացող անձանց) թե վիզայով, և թե առանց վիզայի մուտքի ընթացակարգ:

**Օտարերկրացիների Ուկրաինա մուտքի (Ուկրաինայից ելքի) կանոնները** կարգավորվում են 1994 թվականի փետրվարի 4-ի **Ուկրաինայի Օտարերկրացիների իրավական կարգավիճակի մասին օրենքով, Օտարերկրացիների՝ Ուկրաինա մուտքի, նրանց՝ Ուկրաինայից ելքի, Ուկրաինայի տարածքով տարանցիկ ուղևորություններ կատարելու վերաբերյալ կանոններով** (համաձայն՝ Ուկրաինայի Նախարարների կաբինետի 1995 թվականի դեկտեմբերի 29-ի N 1074 որոշման) և Ուկրաինա մուտքի համար վիզայի փաստաթղթերը ստանալու կանոններով (համաձայն՝ Ուկրաինայի Նախարարների կաբինետի 1999 թվականի փետրվարի 20-ի N 227 որոշման):

Օտարերկրացիները մուտք են գործում Ուկրաինա և դուրս են գալիս նրա տարածքից պետական սահմանի անցման կետերով ազգային անձնագրի և վիզայի առկայության դեպքում՝ եթե հակառակը չի նախատեսվում Ուկրաինայի օրենսդրությամբ:

Վիզաների բոլոր տեսակները տրամադրվում են արտասահմանում գտնվող Ուկրաինայի դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական գրասենյակների կողմից: Ուկրաինայի Արտաքին գործերի նախարարության Հյուպատոսական ծառայության վարչությունը Ուկրաինայի տարածքում դիվանագիտական վիզաներ է տրամադրում դիվանագետներին՝ նրանց հավատարմագրման ժամկետով: Ծառայողական վիզաները տրամադրվում են օտարերկրյա պետությունների արտաքին գործերի կառույցների աշխատակիցներին՝ ծառայողական անձնագրի առկայության դեպքում, օտարերկրյա զանգվածային լրատվամջոցների աշխատակազմին, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներին՝ ծառայողական քարտի վավերականության ժամկետով *(Հավելված 1)*:

Ուկրաինայի տարածքում վիզայի վավերականության ժամկետը կարող է երկարաձգվել: Ուկրաինայում հավատարմագրված դիվանագիտական ծառայության անձնակազմին, դիվանագիտական հիմնարկների աշխատակիցներին, հյուպատոսական հիմնարկներին, միջազգային և այլ կազմակերպություններին տրամադրված դիվանագիտական և ծառայողական վիզաները երկարաձգվում են Ուկրաինայի Արտաքին գործերի նախարարության Հյուպատոսական ծառայության վարչության կողմից:

Վիզայի մյուս տեսակները երկարաձգվում են **Ուկրաինայի ներքին գործերի նախարարության մարմինների կողմից:**
Ուկրաինայի Նախարարների կաբինետի 1999 թվականի փետրվարի 20-ի N 227 որոշման համաձայն՝ օտարերկրացիների վիզաները տրամադրվում են նրանց մուտքի նպատակի հիման վրա՝ համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում *(Հավելված 2)*:

Գոյություն ունեն վիզաների հետևյալ տեսակները՝ ըստ վավերականության՝ **կարճաժամկետ վիզաներ** (տրված մինչև 6 ամսով) և **երկարաժամկետ վիզաներ** (6-12 ամսով), իսկ ըստ օգտագործման հաճախականության՝ **մեկ անգամվա մուտքի վիզաներ**, **բազմակի մուտքի վիզաներ** և **խմբակային մուտքի վիզաներ:**

**Ուկրաինայում ժամանակավոր բնակության ընթացքում, օտարերկրացին իրավունք չունի փոխելու իր կացության կարգավիճակը մեկ ուրիշով և դիմել Ուկրաինայում մշտական բնակության թույլտվություն ստանալու համար:**

2001 թվականի հուլիսի 1-ից, համաձայն Ուկրաինայի նախագահի «Մարդու տեղաշարժի ազատության և բնակության վայրի ազատ ընտրության իրավունքի իրականացմանն ուղղված լրացուցիչ միջոցառումների մասին» 2001 թվականի հունիսի 15-ի N 435 որոշման, Ուկրաինա սահմանված կարգով մուտք գործող օտարերկրացիների և նրանց անձնագրային փաստաթղթերի գրանցումը կատարվում է միայն պետական սահմանի անցման կետերում Ուկրաինայի Պետական սահմանի պաշտպանության պետական կոմիտեի մարմինների կողմից: Ուկրաինայում սահմանված կարգով ժամանակավոր բնակություն հաստատած օտարերկրացիների և նրանց անձնագրային փաստաթղթերի հետագա գրանցումը չի իրականացվում ներքին գործերի գործակալությունների կողմից:

Ուկրաինայի տարածքում օտարերկրացու կողմից ազգային անձնագրերի կորստի դեպքում, անձնագրի տերը պետք է այդ մասին տեղեկացնի իրեն ընդունող կազմակերպությանը և ներքին գործերի գործակալությանը: Վերջինս, օտարերկրացու խնդրանքով, նրան է տրամադրում փոխարինող փաստաթուղթ:

Օտարերկրացիների կողմից իրենց երկրի դիվանագիտական ներկայացուցչություններում կամ հյուպատոսական վարչությունում օտարերկրացու դիմումի և նրան ընդունող կազմակերպության խնդրանքի հիման վրա ազգային անձնագրեր ստանալուց հետո, ներքին գործերի գործակալությունն ապահովում է ելքի վիզայի տրամադրումը կամ օտարերկրացու ազգային անձնագրի գրանցումը:

## ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԵԼՔԸ ՈՒԿՐԱԻՆԱՅԻՑ

Այն օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացի չհանդիսացող անձինք, որոնք ժամանակավորապես բնակվել են Ուկրաինայում, պետք է երկրից դուրս գան՝ հետևելով Ուկրաինա մուտքի կանոններին:

Ուկրաինայի Նախարարների կաբինետի 2000 թվականի հունիսի 5-ի N 910 որոշման համաձայն՝ օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացի չհանդիսացող անձիք, որոնք մշտական բնակություն են հաստատել Ուկրաինայում կամ Ուկրաինայում են բնակվում Զբաղվածության կենտրոնի հաստատման հիման վրա, աշխատանքի տեղավորման նպատակով, կամ ուսանում են Ուկրաինայի բարձրագույն ուսումնական հաստատություններում, Ուկրաինայի տարածքից պետք է դուրս գան՝ անձնագրային փաստաթղթերում և բնակության վկայականներում կատարված համապատասխան նշումների համաձայն:

**Ուկրաինայի տարածքով օտարերկրացիների տարանցիկ ուղևորությունների <u>կատարումը</u>** թույլատրվում է այն դեպքում, երբ օտարերկրացին ներկայացնում է Ուկրաինական տարանցիկ վիզան, ուղևորության նպատակակետ հանդիսացող երկրի վիզան և տոմսերը կամ այլ փաստաթղթեր, որոնք հավաստում են նախատեսվող ուղևորության իսկապես տարանցիկ լինելը:

**Այն քաղաքացիները, որոնց պետությունները Ուկրաինայի հետ կնքել են քաղաքացների՝ առանց վիզայի տեղաշարժի ռեժիմի վերաբերյալ միջազգային համաձայնագրեր** *(Հավելված 4)*, Ուկրաինա մուտք են գործում վավերական

ազգային անձնագրով՝ պայմանով, որ նրանք ունենան ապահովագրական վկայագիր և Ուկրաինայի իրավաբանական անձի կամ ուկրաինացի մասնավոր անձի կողմից պատշաճ կերպով ձևակերպված հրավեր (բնօրինակը)՝ եթե միջազգային համաձայնագրով այլ բան չի նախատեսվում: Դեռևս գործում է ԱՊՀ եկրների հետ առանց վիզայի տեղաշարժի ռեժիմը (համաձայն 1992 թվականի հոկտեմբերի 9-ի ԱՊՀ երկրների քաղաքացիների առանց վիզայի միգրացիայի մասին համաձայնագրի)՝ ներառյալ Ռուսաստանը և Բելառուսը (համաձայն կնքված համաձայնագրերի):

## ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՏԱՐԱԾՔ ՄՈՒՏՔ ԳՈՐԾՈՂ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Ուկրաինայի օրենսդրության համաձայն՝ Ուկրաինայի քաղաքացիները (այլ պետությունների քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք), որոնք մշտական բնակություն են հաստատել Ուկրաինայի տարածքում, օգտվում են անվճար բժշկական օգնություն ստանալու իրավունքից: Մյուս բոլոր օտարերկրացիների համար բժշկական օգնության տրամադրման կարգը սահմանվում է Ուկրաինայի Նախարարների կաբինետի կողմից:

1997 թվականի սեպտեմբերի 17-ին, Ուկրաինայի Նախարարների կաբինետը ընդունեց N1021 որոշումը (դրան հաջորդող Ուկրաինայի Նախարարների կաբինետի 1998 թվականի դեկտեմբերի 4-ով թվագրված N1926, 1999 թվականի հունվարի13-ով թվագրված N35, 2001 թվականի մայիսի 23-ով թվագրված N555 և 2001 թվականի հունիսի 26-ով թվագրված N673 որոշումների համաձայն կատարված փոփոխություններով), որը հաստատում է **Ուկրաինայի տարածքում ժամանակավորապես բնակվող օտարերկրացիներին շտապ բժշկական օգնության տրամադրման կարգը:**

Ուկրաինայի տարածքում ժամանակավորապես բնակվող օտարերկրացիներին շտապ բժշկական օգնության տրամադրման կարգի համաձայն՝ Ուկրաինայի տարածքում ժամանակավորապես բնակվող օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար սահմանվել է **ապահովագրական վկայագրի** պարտադիր առկայությունը, ինչը երաշխավորում է շտապ բժշկական օգնության ծախսերի հատուցումը: Նշյալ ապահովագրական վկայագիրը պետք է ձեռք բերվի Ուկրաինայի պետական բաժնետիրական ապահովագրական ընկերությունից (DASK «Ուկրինմեդստրախ»), որը մասնագիտացած է օտարերկրացիներին շտապ բժշկական օգնության ծախսերի հատուցման ոլորտում: Եթե Ուկրաինայի պետական բաժնետիրական ապահովագրական ընկերության և օտարերկրյա ապահովագրական ընկերության միջև գոյություն ունի համաձայնություն, ապա վերջինս պետք է երաշխավորի Ուկրաինայի տարածքում ժամանակավորապես բնակվող օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց շտապ բժշկական օգնության տրամադրման ծախսերի հատուցումը՝ պայմանով, որ տվյալ անձը ունենա օտարերկրյա ապահովագրական ընկերության ապահովագրական վկայագիրը:

Վերոնշյալ Կանոնակարգը **չի տարածվում** Ուկրաինայում օտարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական գրասենյակների *աշխատակիցների* և նրանց ընտանիքի անդամների, Ուկրաինայի նախագահի, Ուկրաինայի Նախարարների կաբինետի, Գերագույն ռադայի և Ուկրաինայի Սահմանադրական դատարանի հրավերով ժամանած պաշտոնական պատ-

վիրակության անդամների, ռազմանավերի անձնակազմի և օժանդակ ռազմանավերի անձնակազմի անդամների վրա, այն անձանց վրա, որոնք, սահմանված կարգով, Ուկրաինայում ստացել են փախստականի կարգավիճակ, ինչպես նաև այն անձանց վրա, ովքեր դիմել են՝ Ուկրաինայում փախստականի կարգավիճակ ստանալու համար:

Եթե Ուկրաինայի գործող միջազգային պայմանագրերով սահմանվում են այլ կանոններ, ապա կիրառելի են Ուկրաինայի միջազգային պայմանագրերում նշված դրույթները:

**Վերոնշյալի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության, Ադրբեջանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Բուլղարիայի Հանրապետության, Չեխիայի Հանրապետության, Վրաստանի, Մեծ Բրիտանիայի, Հունգարիայի, Ղազախստանի Հանրապետության, Ղրղըզստանի Հանրապետության, Մոլդովայի Հանրապետության, Մոնղոլիայի, Ռուսաստանի Դաշնության, Տաջիկստանի, Թուրքմենստանի և Ուզբեկստանի Հանրապետության քաղաքացիները, որոնց երկրների հետ Ուկրաինայի կնքած միջազգային պայմանագրերով նախատեսվում է շտապ բժշկական օգնության անվճար տրամադրում, կարող են չունենալ ապահովագրական վկայագիր:**
**Վերոնշյալի համաձայն՝ ապահովագրական վկայագիր չի պահանջվում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության հանրային առողջապահության ծառայությունների բնագավառի փորձագետների, Կորեայի Ժողովրդադեմոկրատական Հանրապետությունից ժամանած ուսանողների, ասպիրանտների, գիտական մասնագիտացման նպատակով ուղարկված անձանց, Ռումինիայից ժամանած կազմակերպված զբոսաշրջային խմբերի համար:**

Ուկրաինայի Նախարարների կաբինետի 1999 թվականի փետրվարի 20-ով թվագրված N 227 որոշմամբ հաստատվեցին **Ուկրաինայի մուտքի համար վիզայի փաստաթղթերի ձևակերպման կանոնները:** Ուկրաինայի մուտքի համար վիզայի փաստաթղթերի ձևակերպման կանոններով սահմանվում են օտարերկրացու կամ քաղաքացիություն չունեցող անձի վիզայի ձևակերպման մերժման հիմքերը, որոնց թվում է «կարգավորող ապահովագրական վկայագրի բացակայությունը» (ձեռք բերված պետական բաժնետիրական ապահովագրական ընկերությունից (DASK «Ուկրինմեդստրախ»)):

Ուկրաինայի կառավարությունը հաստատել է Ուկրաինայի տարածքում ժամանակավորապես բնակվող օտարերկրացիներին շտապ բժշկական օգնության տրամադրման կարգը, համաձայն որի՝ սահմանվել է օտարերկրացիներին շտապ բժշկական օգնության ծախսերի հատուցման ոլորտում մասնագիտացված պետական բաժնետիրական ապահովագրական ընկերությունից (DASK «Ուկրինմեդստրախ») ձեռք բերված ապահովագրական վկայագրի պարտադիր առկայությունը Ուկրաինայի տարածքում ժամանակավորապես բնակվող օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար:

Ուկրաինայի տարածքում բնակվող օտարերկրացիներին տրամադրվող շտապ բժշկական օգնության ծախսերի հատուցումը երաշխավորող ապահովագրական վկայագրերը կարելի է ձեռք բերել հետևյալ ապահովագրական ընկերություններում՝ «AXA Colonia Krankenversicherung AG» (Եվրոպական Միության պետություններ, «Mediton Invest Ltd» (Իսրայել, Թուրքիա և Չինաստան) «Mercur-CB» (Հարավսլավիա), «Radiant Overseas» (Հնդկաստան, Շրի-Լանկա, Աֆղանստան,

Նեպալ և Բանգլադեշ), «White Night International» (Պակիստան), «Balva» (Լատվիա), «Snoro-Garantas» (Լիտվա) և «Nordica» (Էստոնիա):

Ձեռք բերելով նշված ապահովագրական վկայագիրը՝ դրա տերը կազատվի շտապ բժշկական օգնության վճարումներից: Միևնույն ժամանակ, օտարերկրացու համար, ապահովագրական վկայագրի վավերականության ժամանակահատվածում, չեն նախատեսվում սահմանափակումներ՝ կապված բժշկին կատարված այցերի արդյունքում գոյացած ծախսերի և այցերի քանակի առումով: DASK «Ուկրինմեդստրախը» շտապ բժշկական օգնության ծախսերը պետք է հատուցի համապատասխան առողջապահական կենտրոնին:

DASK «Ուկրինմեդստրախը» հիմնադրվել է Ուկրաինայի կառավարության որոշմամբ՝ Ուկրաինայի տարածքում ժամանակավորապես բնակվող օտարերկրացիներին շտապ բժշկական օգնության տրամադրումը համակարգելու համար:
Ընկերությունը օտարերկրացիներին շտապ բժշկական օգնության տրամադրման վերաբերյալ համաձայնագրեր ունի Ուկրաինայի բոլոր շրջանների (օբլաստ) և Ղրիմի Ինքնավար Հանրապետության 758 պետական, հանրային և մասնավոր բժշկական հիմնարկների հետ: Օտարերկրյա քաղաքացիները բժշկական օգնության համար կարող են դիմել Ուկրաինայի առաջատար բազմապրոֆիլ հիվանդանոցներ, առողջապահական կենտրոններ, հիվանդանոցներ, բժշկական կենտրոններ, կլինիկաներ և այլուր: Անհրաժեշտության դեպքում, տուժածին բժշկական հիմնարկ տեղափոխելու համար ընկերությունը կտրամադրի շտապ օգնության մեքենա, օդանավ կամ ուղղաթիռ:

DASK «Ուկրինմեդստրախն» ունի իր սեփական Ստուգման Կենտրոնը, որը գործում է շուրջօրյա և զինված է հեռախոսային և ֆաքսիմիլային կապի սարքավորումներով: Կենտրոնում հերթապահող որակավորված բժիշկները կորոշեն հիվանդության տեսակը, կտրամադրեն անհրաժեշտ բժշկական օգնությունը և կվերահսկեն օգնության տրամադրման ընթացքը:
Օտարերկրացիներին տրամադրվող բժշկական օգնության համար զանգահարել DASK «Ուկրինմեդստրախի» Ստուգման Կենտրոն հետևյալ հեռախոսահամարներով՝
**(+38 044) 216-80-10** կամ **(+38 044) 216-09-97** (շուրջօրյա):

Կենտրոն դիմելիս՝ ապահովագրական վկայագրի տերը պետք է հայտնի իր ազգանունը և անունը, ապահովագրական վկայագրի տեսակը, գրանցման համարը և վավերականության ժամկետը, հայտնի իր առողջական խնդրի, բողոքների և առողջության վիճակի մասին, այն վայրի մասին, որտեղ տվյալ պահին նա բնակվում է, հայտնի իր հեռախոսահամարը կամ իրեն ներկայացնող անձի հեռախոսահամարը, որի միջոցով հեռախոսային օպերատորը կամ բժիշկը կարող է կապնվել իր հետ:

Կախված օտարերկրացու առողջական վիճակից՝ նրան կարող են տրամադրել շտապ բժշկական օգնություն կամ խորհուրդ տալ այցելել կոնկրետ բժշկական հիմնարկ, որտեղ նա կարող է բուժում ստանալ: DASK «Ուկրինմեդստրախի» բժիշկները, բուժման ողջ ընթացքում, կապահովեն բժշկական որակյալ և բավարար չափով տրամադրված ծառայություններ:
DASK «Ուկրինմեդստրախը» միշտ պատրաստ է Ձեզ օգնության հասնելու:

# ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

## ՀԱՎԵԼՎԱԾ 1

**Դիվանագիտական և ծառայողական վիզաներ**

**Դիվանագիտական վիզաները** տրամադրվում են դիվանագիտական անձնագիր ունեցող մարդկանց հետևյալ խմբին.

- Ուկրաինայում օտարերկրյա առաքելությունների և հյուպատոսությունների դիվանագիտական անդամներին և նրանց ընտանիքի անդամներին,
- դիվանագիտական ներկայացուցչությունների հետ Ուկրաինա մուտք գործող օտարերկրացիներին,
- դիվանագիտական սուրհանդակներին,
- կառավարությունների, խորհրդարանների, միջազգային կազմակերպությունների անդամներին,
- ակնառու քաղաքական գործիչներին, որոնց մուտքը Ուկրաինա դիվանագիտական նշանակության ունի:

**Ծառայողական վիզաները** լինում են երեք կարգի և տրամադրվում են.

C-1

- Ուկրաինայում օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական գրասենյակների ծառայողական աշխատակազմին և նրանց ընտանիքի անդամներին,
- Ուկրաինայում գործող միջազգային կազմակերպությունների անդամներին,
- արտասահմանյան երկրներից Ուկրաինա գործով մուտք գործող պետական իշխանության մարմինների պաշտոնյաներին:
-

C-2

- ռազմական ստորաբաժանումների և կառույցների անդամներին, որոնք գործով մուտք են գործել Ուկրաինա՝ համապատասխան պետական մարմնի հրավերով:
-

C-3

- արդյունաբերական, առևտրային, ֆինանսական և քաղաքական շրջանակների ներկայացուցիչներին, որոնք գործով մուտք են գործել Ուկրաինա՝ Ուկրաինայում սահմանված կարգով գրանցված պետական կառույցների հրավերով:
-

## ՀԱՎԵԼՎԱԾ 2

**Վիզաների տրամադրման հիմքերը**

**P-1** (մասնավոր վիզա)՝ սահմանված նմուշի հրավերը, որը պատշաճ կերպով ձևակերպվել է ներքին գործերի գործակալությունների կողմից կամ Ուկրաինայի բժշկական հիմնարկի կողմից տրված հրավերը և ուղևորության մասնավոր բնույթը հավաստող այլ փաստաթղթերը:

**P-2** (մասնավոր վիզա)՝ անձնական դիմում, վիզայի տրամադրման/մերժման համար պատասխանատու Ուկրաինայի դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսու-թյան աշխատակցի հետ ունեցած անձնական հարցազրույցի արդյունքները և օտար-երկրացու կամ քաղաքացի չհանդիսացող անձի Ուկրաինական ծագումը հավաստող փաս-տաթղթերը:

**B** (բիզնես վիզա)՝ սահմանված նմուշի հրավերը, որը պատշաճ կերպով ձևակերպվել է ներքին գործերի գործակալությունների կողմից:

**T** (զբոսաշրջային վիզա)՝ ուղևորության զբոսաշրջային բնույթը հավաստող փաստա-թղթերը:

**H** (վիզա մարդասիրական առաքելությունների անդամների համար)՝ Ուկրաինայի Նախա-րարների կաբինետի Օտարերկրյա պետությունների կողմից տրամադրվող մարդասիրա-կան օգնության համակարգման, տեղափոխման, անվտանգության և բաշխման հարցերով կոմիտեի հաստատումը:

**E** (վիզա փրկարարական ծառայությունների անդամների համար)՝ Ուկրաինայի Արտակարգ իրավիճակների նախարարության հաստատումը:

**O** (ուսանողական վիզա)՝ Ուկրաինայի Կրթության նախարարության կողմից տրված սահմանված նմուշի հրավերը:

**M** (վիզա զանգվածային լրատվամիջոցների աշխատակազմի համար)՝ վիզա տրամադրելու վերաբերյալ Ուկրաինայի Արտաքին գործերի նախարարության հրահանգը:

**R** (վիզա կրոնական առաքելությունների անդամների համար)՝ Կրոնների Պետա-կան Կոմիտեի կողմից վկայագրված կրոնական կազմակերպության կողմից տրված հրավերը:

**TP-1** (տարանցիկ վիզա)՝ ուղևորության տարանցիկ բնույթը հավաստող փաստաթուղթը, երրորդ երկիր մուտքի վիզան, տոմսը և այլն:

**TP-2** (տարանցիկ վիզա)՝ Ուկրաինայի տարածքով բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով և ուղևորատար ավտոբուսային տրանսպորտային միջոցներով կատարվող փոխադրումների տարանցիկ բնույթը հավաստող փաստաթղթերը:
**EI-1** (ներգաղթի վիզա)՝ Աշխատանքի նախարարության կողմից տրված աշխատանքի թույլտվությունը:
**EI-2** (ներգաղթի վիզա)՝ տեղացի գործադիր իշխանության մարմնի կողմից Ուկրաինայում մշտական բնակության համար տրված թույլտվությունը:
**OI** (վիզա միջազգային փոխադրումների ծառայության աշխատակազմի համար)՝ Ընդունող երկրի համապատասխան գործակալության կողմից միջազգային փոխադրումների համար տրված լիցենզիան:
Մյուս տեսակի վիզաները տրամադրվում են նախարարությունների, կենտրոնական գործադիր իշխանության այլ մարմինների կողմից տրամադրվող հրավերները, ինչպես նաև Ուկրաինայի իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից տրամադրվող և Ուկրաինայի Նախարարների կաբինետի կողմից սահմանված նմուշի հրավերները ստանալու համար՝ օտարերկրյա պետությունների պետական իշխանությունների, միջազգային կազմակեր-պությունների կողմից ներկայացվող դիմումների հիման վրա:
Եվրոպական Միության անդամ հանդիսացող պետությունների, Կանադայի, Սլովակիայի Հանրապետության, Միացյալ Նահանգների, Թուրքիայի, Շվեյցարիայի և Ճապոնիայի քաղաքացիներին վիզաներ (C, B, M, K, P տեսակի) տրամադրելու համար հրավերներ չեն պահանջվում **(Ուկրաինայի Նախարարների կաբինետի 2000 թվականի մայիսի 5-ի N 750, 2000 թվականի սեպտեմբերի 1-ի N 1376, 2001 թվականի փետրվարի 28-ի N 192 որոշումների** համաձայն):
Անհրաժեշտության դեպքում, Ուկրաինայի դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական գրասենյակի աշխատակիցը կարող է պահանջել լրացուցիչ փաստա-թղթեր, որոնցում առավել հստակ նշված կլինի օտարերկրացու/բնակիչ չհանդիսացող անձի ուղևորության նպատակը, կամ հրավիրել տվյալ անձին լրացուցիչ հարցազրույցի:

ՀԱՎԵԼՎԱԾ 3

**Այն կարգի անձնագրերը, որոնք պետք է գրանցվեն Ուկրաինայի ներքին գործերի մարմիններում.**

- Օտարերկրացիներ, որոնք Ուկրաինա են ժամանել ավելի քան 6 ամսով,
- Օտարերկրացիներ, որոնք Ուկրաինա են ժամանել պայմանագրային աշխատանքի կամ կրթության համար:
-

ՀԱՎԵԼՎԱԾ 4

**Այն երկրների ցանկը, որոնք Ուկրաինայի հետ ունեն առանց վիզայի տեղաշարժի ռեժիմ (2001 թվականի հոկտեմբեր)**

- **Արգենտինայի Հանրապետություն**՝ դիվանագիտական և ծառայողական (պաշտոնական) անձնագրեր,
- **Հայաստանի Հանրապետություն**՝ ինքնությունը և քաղաքացիությունը հաստատող փաստաթղթեր,
- **Ադրբեջանի Հանրապետություն**՝ ինքնությունը և քաղաքացիությունը հաստատող փաստաթղթեր,
- **Բելառուսի Հանրապետություն**՝ ինքնությունը և քաղաքացիությունը հաստատող փաստաթղթեր,
- **Բուլղարիայի Հանրապետություն**՝ դիվանագիտական և ծառայողական անձնագրեր,
- **Բրազիլիայի Դաշնային Հանրապետություն**՝ դիվանագիտական և ծառայողական անձնագրեր,
- **Կուբայի Հանրապետություն**՝ դիվանագիտական, ծառայողական անձնագրեր,
- **Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն**՝ դիվանագիտական և ծառայողական անձնագրեր, ազգային օտարերկրյա անձնագիր՝ նշված որպես «ծառայողական»,
- **Խորվաթիայի Հանրապետություն**՝ դիվանագիտական և ծառայողական անձնագրեր,
- **Չիլիի Հանրապետություն**՝ դիվանագիտական, ծառայողական և պաշտոնական անձնագրեր (Չիլի),
- **Էստոնիայի Հանրապետություն**՝ դիվանագիտական անձնագրեր,
- **Վրաստանի Հանրապետություն**՝ ինքնությունը և քաղաքացիությունը հաստատող փաստաթղթեր,
- **Գվինեայի Հանրապետություն**՝ դիվանագիտական և ծառայողական անձնագրեր,
- **Հունգարիայի Հանրապետություն**՝ բոլոր տեսակի անձնագրեր,
- **Իրանի Իսլամական Հանրապետություն**՝ դիվանագիտական և ծառայողական անձնագրեր,
- **Իսրայել**՝ դիվանագիտական անձնագրեր,

- **Ղազախստանի Հանրապետություն՝** ինքնությունը և քաղաքացիությունը հաստատող փաստաթղթեր,
- **Կորեայի Հանրապետություն՝** - դիվանագիտական և ծառայողական անձնագրեր,
- **Ղրղզստանի Հանրապետություն՝** ինքնությունը և քաղաքացիությունը հաստատող փաստաթղթեր,
- **Լաոսի Ժողովրդադեմոկրատական Հանրապետություն՝** դիվանագիտական և ծառայողական անձնագրեր,
- **Լիտվայի Հանրապետություն՝** դիվանագիտական և ծառայողական անձնագրեր,
- **Լատվիայի Հանրապետություն՝** դիվանագիտական անձնագրեր, ծառայողական անձնագրեր դիվանագիտական և հյուպատոսական հիմնարկների աշխատակիցների համար՝ հավատարմագրման ժամկետով,
- **Մեքսիկայի Միացյալ Նահանգներ՝** դիվանագիտական անձնագրեր,
- **Մոնղոլիա՝** բոլոր տեսակի անձնագրեր,
- **Լեհաստանի Հանրապետություն՝** բոլոր տեսակի անձնագրեր,
- **Ռումինիա՝** բոլոր տեսակի անձնագրեր,
- **Ռուսաստանի Դաշնություն՝** ինքնությունը և քաղաքացիությունը հաստատող փաստաթղթեր,
- **Հարավսլավիայի Սոցիալիստական Դաշնային Հանրապետություն (ՀՍԴՀ)՝** դիվանագիտական և ծառայողական անձնագրեր,
- **Սլովակիայի Հանրապետություն՝** դիվանագիտական և ծառայողական անձնագրեր,
- **Թուրքիայի Հանրապետություն՝** դիվանագիտական, ծառայողական և հատուկ անձնագրեր (Թուրքիա),
- **Ուզբեկստանի Հանրապետություն՝** ինքնությունը և քաղաքացիությունը հաստատող փաստաթղթեր,
- **Վիետնամի Սոցիալիստական Հանրապետություն՝** դիվանագիտական և ծառայողական անձնագրեր:

## Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ 5

**Միգրանտներին աջակցություն տրամադրող կազմակերպությունների ցանկը**

**Ուկրաինայում Հայաստանի Հանրապետության Դեսպանատուն**
Պրն. Արմեն Խաչատրյան՝ Արտակարգ և Լիազոր Դեսպան
Վոլոդիմիրսկա փ. 45, Կիեվ 01901, Ուկրաինա
Հեռ.՝ (38044) 234-90-05, 235-10-04
Ֆաքս՝ (38044) 235-43-55
Էլ. փոստ՝ despanut@voliacable.com

**Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ) ՈւԿՐԱԻՆԱ**Միխաիլիվսկա փ. 8
Կիեվ 01001
Ուկրաինա

Հեռ.՝ +380.4 456 85 01 5

Ֆաքս՝ +380.4 456 85 01 6

**Ուկրաինայի Կարմիր խաչի ընկերություն**
Պուշկինսկայա փ. 30, 01004 Կիև

**Հեռ.՝**(380) (44) 235 01 57
**Ֆաքս՝** (380) (44) 2881658, 2351096, 2302646
**Տելեքս՝** 131329 LICRO SU
**Էլ. փոստ՝** *international@redcross.org.ua*
**Վեբ կայք՝** *http://www.redcross.org.ua*

**Առողջության և շրջակա միջավայրի պահպանման միջազգային բարեգործական հիմնադրամ «Ռեգիոն Կարպատ»** (NEEKA)
Մուկաչևո, Միչուրինի փ. 3
Զակարպատիա, 89600
Հեռ./ֆաքս՝ +38 03131 3 14 50
Հեռ.՝ +38 03131 3 21 22;
+38 03131 4 46 31

**Մարդու իրավունքների պաշտպանության Չերնիգովի Պետական Կոմիտե**

Գորկու փ. 57/1
Չերնիգով, 14000
Հեռ./ֆաքս՝ (0462) 625-381

**Շրջանային քաղաքացիական հասարակություն «Վոլին Պերսպեկտիվզ»**
Վորոնխինա փ. 8
Հեռ./Ֆաքս՝ (03322) 555 42
Նինա Վոլոդիմիրևնա Պախոմյուկ
Խորհրդի Ղեկավար
Բջջ. հեռ.՝ 8 050 690 48 29
Էլ. փոստ՝ extrim@lt.ukrtel.net

**Ուժգորոդի Միգրանտների խորհրդատվության կենտրոն (ՄԽԿ)**
**Կանանց Տրանսկարպատյան հասարակական կազմակերպություն «Վեստա»**
Լև Տոլստոյի փ. 31
Ուժգորոդ, 88018
Հեռ.՝+ 38 (03122) 3-20-91
Ֆաքս՝ + 38 (0312) 67-27-10
Իննա Սաբադոշ
Բջջ. հեռ.՝ 8 050 693 95 13
inna@vesta.uzhgorod.ua

**Միջազգային Բարեգործական Ֆոնդ «Կարիտաս Ուկրաինա»**
Մինաի, Պ. Կարպատսկու փ., 2a
89427, Ուկրաինա, Զակարպատիայի շրջան,
Ուժգորոդ
Հեռ.՝(0312) 664-829

**Օդեսսայի Միգրանտների խորհրդատվության կենտրոն (ՄԽԿ)**
Երիտասարդ Իրավաբանների
Հարավ-Ուկրաինական Կենտրոն
Տերեշկովայի փ. 43, սենյակ N 2
Օդեսսա, 65000
Հեռ.՝(048) 728-27-02
Ֆաքս՝ (048) 760-16-16
**Լվովի Միգրանտների խորհրդատվության կենտրոն (ՄԽԿ)**
Արևմտա-Ուկրաինական Ռեսուրսային Կենտրոն
Լիսենկա փ. 21, 1-ին հարկ, Լվով, 79008
Հեռ.՝(032) 297-68-13
Ֆաքս՝ (032) 297-66-24
www.zurc.org

**Խարկովի Միգրանտների խորհրդատվության կենտրոն (ՄԽԿ)**
Խարկովի Շրջանային Բարեգործական Ֆոնդ
«Աջակցության Սոցիալական Ծառայություն»
Գվ. Շիրոնինցիվ փ. 116
Խարկով, 61195
Հեռ.՝(057) 752-81-25
Ֆաքս՝ (057) 712-48-89

**Վիննիցայի Միգրանտների խորհրդատվության կենտրոն (ՄԽԿ)**
**Երիտասարդական Կենտրոն «Ֆորում»**
Կոսմոնավտիվ փ. 30, սենյակ N 410, Vinnica, 21021
Հեռ./Ֆաքս՝ + 38 (0432) 56-01-53
www.mcforum.vinnitsa.com

U N
D P

IOM • OIM